ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

N 01/24

Ք.Եղեգնաձոր 10.01.2024թ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և «ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Կ.Ստեփանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մշակութային ժառանգության ծրագրի(ծրագրի դասիչ՝ 1075) շրջանակներում նախատեսված ընթացիկ դրամաշնորհը(այսուհետև՝ դրամաշնորհ) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.12.2023թ N 2323-Ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի 08.02.02.02. «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում է պարտավորություն 2024 թվականի ընթացքում պահպանել թվով 9630 թանգարանային առարկաներ, սպասարկել թվով 3200 թանգարանային այցելուների, թանգարանային առարկաները համալրել 30 միավոր առարկայով, կազմակերպել թվով 7 ցուցահանդես, թվով 14 թանգարանային առարկաներ վերականգնել:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 17823.4 (տասնյոթ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ 2971(երկու միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամ:

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ

Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351074027
ՀՎՀՀ 08918507

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 4
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000298
ՀՎՀՀ 08902356

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ